Թախիծ

Սարվորը հնձվորին մածուն է բերում, հնձվորը սարվորին՝ կարտոֆիլ: Սարվորը վերևում է, հնձվորը՝ հովտում: Սարից բերելը հեշտ է: Հովտից ձին փրփուր կաթելով է բարձրանում վեր: Հետիոտն բեռ տանելն անմտություն է: Բեռը կարտոֆիլ պիտի լիներ՝ զառիվերի գլխին կա: Տնտեսությանն է, չի կարելի, բայց զառիվերի գլխին է, ուրթին մոտիկ: Պահակ կա, բայց ախար լավ կարտոֆիլ է խոճկորների պես սպիտակ ու խոշոր: Հետո, ախար, զառիվերը, շալակո՛վ... Ձի՛ն է փրփուր կաթում:

Կգնաս առանց շալակի, զառիվերի գլխին կարտոֆիլի ցանք կա, այնտեղից կշարունակես շալակով: Պահակն Ադամ քեռին է:

Եվ օգոստոսի սկզբներից, հենց որ կարտոֆիլն ուտելի էր դառնում, դաշտը մի կողմից սկսում էր սևանալ, դա մածնի հատուցումն էր:

Պահակ Ադամ քեռուն ասում են, որ լավ չի պահակություն անում: Համաձայնում է: Պարտավորեցնում են, որ աչալուրջ լինի: Պարտավորվում է: Բայց սևը շարունակում է մեծանալ և, մինչև քոչի սարից իջնելը, բռնում է դաշտի կեսը:

Որոշում են, որ ճամփի վրա, ուրթի տակ, էլ կարտոֆիլ չեն ցանի: Բայց, ախար, սար գնացողը մեղք կլիներ. գյուղից շալակեր տաներ սար և տարածը լիներ մանր, անպետք, ջրուտ կարտոֆիլ: Անխղճություն կլիներ: նորից ցանում են և, որովհետև ճամփի վրա է լինում, պահակ են դնում: Պա հակը նորից լինում է Ադամ քեռին: Եվ՝ անցյալ, նախանցյալ տարվա, տասնամյակների պատմությունը:

Այս անգամ Ադամ քեռուն շատ լուրջ զգուշացում են տալիս՝ հանելու սպառնալիքով: Մեղքն ընդունում է ղեկավարների առջև: Նաև մտքի մեջ է ընդունում մեղքը, որովհետև տնաշենները և տանու՛մ են կարտոլը, և ծիծաղում պահակի վրա: Ոչ մի թուփ կարտոֆիլ,– այս վճռով Ադամ քեռին դուրս է գալիս գրասենյակից, ճամփա ընկնում պահակատեղ, բայց, զառիվերը ձգելիս, քանի գնում՝ թուլանում է վճռկանությունը: Ախար անտերը շատ է զառիվեր ու շատ է երկար, քամում, թողնում է առանց մի կաթիլ ջրի: Դե նախագահի պարտքն է, որ բրիգադրին զգուշացնի, բրիգադրի պարտքն է իրեն Ադամ քեռուն հիշեցնի, նրա պարտքն էլ պարտավորվելն է: Ինչպես նաև հնձվորի պարտքն է սարվորին կարտոֆիլ տանել: Հո շալակո՞վ չպիտի տանի, հո նախագահն ու բրիգադիրը անհասկացո՞ղ չեն: Ձի՛ն է փրփուր կաթում...

Զառիվերի գլխին այնքան նեկտարածաղիկ կա՛... Մի բռաչափ հովիտ է, բայց այնքան ծաղիկ կա: Հենց որ հասնում ես՝ ռունգերիդ մեջ շուլալվում է նեկտարածաղկի բուրմունքը:

Հովտից Աղամ քեռին դուրս է գալիս հոգին խաղաղված, բեղերի ու ռունգերի մեջ տանելով հովտի բույրը: Մի քիչ դենը Սպիտակ աղբյուրն է, բլթում է քարի տակից, մի ակունքով, սառը և սառնությունից կապույտ երանգով, ու գլորվում է ձորը: Ափերը միագույն կանաչ են, փափուկ:

Բացարձակ անդորրի մեջ աղբյուրը դնգում է ինչպես մանկան հեքիաթում:

Աղբյուրից քիչ դենը պահակի քողտիկն է՝ կանաչ խոտով ծածկված, կանաչ աշխարհի հետ ձուլված-կորած: Մոտիկից էլ չի երևում: Կարծես իսկի քողտիկ չկա, պահակ չկա: Կարտոֆիլն առանց պահակի է:

Պահակ, անպայման, կար. գյուղը լուր ընկավ, որ Դանիելյան Ադամ քեռին մեկին բոթել է՛... Կարտոֆիլ հանելիս է եղել չի թողել, հրել է, հետն էլ ասել՝ «մարդ աստծո, հանրային կարտոլ է, ես էլ պահակ եմ, հո էստեղ խրտվիլակ չեմ...»: Հա՛, Ադամ քեռին մեկին ծեծել է... Ուզեցին իմանալ՝ ինչ տեղն է խփել, ինչպես է խփել՝ օգնել էր, միասին հանել էին ու միասին հնարել, թե Ադամ քեռին մեկին բոթել է՛, և նա շա՛տ նեղացել է Ադամ քեռուց...